# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 197 - Ա** **19 մայիսի 2020թ.**

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 39-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի N 13-Ն և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 2-ի N 64-Ն համատեղ հրամանը

**որոշում եմ՝**

1. Հաստատել զբաղվածության աջակցության Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ գործունեության ընթացքում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի N 13-Ն և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 2-ի N 64-Ն համատեղ հրամանով հաստատված զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի օրինակելի կանոնադրությամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի մարտի 18-ի «Զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի փետրվարի 2-ի N 10 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39–Ա կարգադրությունը:

19.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 17108300069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 19 -ի
N 197-Ա որոշման

# ԿԱԶՄ
## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Գրիգորյան Նարեկ | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Մուշեղյան Յուրա | - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ |
| Զոհրաբյան Արմեն | - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ |
| Վարդանյան Լուսինե | - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար |
| Մնացականյան Վարդուհի | - մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ |
| Խաչատրյան Գևորգ | - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ |
| Հայրապետյան Հայկ | - զբաղվածության պետական գործակալության Գավառի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/ |
| Գալստյան Ժիրայր | - զբաղվածության պետական գործակալության Մարտունու զբաղվածության տարածքային կենտրոնի Տնօրենի ժ/պ /համաձայնությամբ/ |
| Մուրադյան Խաժակ | - զբաղվածության պետական գործակալության Սևանի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/ |
| Պետրոսյան Նվեր | - զբաղվածության պետական գործակալության Վարդենիսի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/ |
| Երիցյան Ռուբեն | - զբաղվածության պետական գործակալության Ճամբարակի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/ |

| | |
|---|---|
| Գևորգյան Անահիտ | - «Մարտունու կանաց համայնքային խորհուրդ» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/ |
| Հովհաննիսյան Իրինա | - «Աստղացոլք» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/ |
| Ղուլոյան Ժաննա | - «Արժանապատիվ սերունդ» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/ |

19.05.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ